ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅԷ-ՌՅԷԸ

ՀԱՏՈՐ

ԶԵ

1928

ՅՈՒՆԻՍ

ԹԻՒ 6

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՆ-ԵՄ-ՈՓԷԻ "ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ„Ը

ԵՒ

"ԱՌԱԿՔ„ ՍՈՂՈՄՈՆԻ

(Շարունակութիւն, տես բազմավէպ 1928 էջ 129)

ԻՆՉՊԷՍ խոստացած էինք անցեալ ամսուն, հոս կը ներկայացնենք Ամեն-եմ-ոփէ եգիպտացւոյն նորագիւտ իմաստութեան հայերէն թարգմանութիւնը լատիներէնին վրայէն կատարած։ Թէև ամբողջական չէ ան, սակայն համեմատաբար շատ քիչ մասեր են դուրս թողուածները, և ներկայէս ամէն ոք կրնայ գնահատել այդ գործը և որոշ գաղափար մը կազմել թէ նիւթին և թէ գաղափարներուն ազնուութեան և բարձրութեան։

Որչափ կարելի էր ջանացինք հաւատարիմ մնալ թարգմանութեան մէջ և անորոշ և տարտամ իմաստները նոյն վիճակին թողինք, որով ընթերցողին թող զարմանք չըպատճառեն շատ մը մթին կէտերը որ հարցականով նշանակուած են։

Բնագրին հայ թարգմանութեան հանդէպ զետեղեցինք Առակաց գրքէն՝ նոյն կամ համազօր կամ մօտաւոր իմաստներ ուր ընթերցողը յատակօրէն պիտի տեսնէ թէ Սրբազան գրքին, և յատկապէս Իթ-իդ գլուխներուն կախումը եգիպտական իմաստութենէն և թէ միանգամայն պիտի կարենայ զուգակշիռ մ'ընել եգիպտական և հրէական մտաւոր, բարոյական և կրօնական զարգացման մասին, բնական է աստուածային յայտնութեան և ներշնչման կշիռն հանելով մէջէն։ Ս. Գրոց միւս մասերէն նշանակուած ցանցառ վկայութիւններն ալ, ինչպէս Սիրաք, Յոբ ևն, նոյնպէս պիտի թելադրեն զոյգ ազգերու մտայնութեան զուգակշիռը։

Բաց ի յիշեալ գլուխներէն, բոլոր միւս վկայութեանց բաղդատութիւնը անհրաժեշտօրէն կախում չ'ենթադրեր, ինչ որ դժուար ալ պիտի ըլլար հաստատել։ Հայերէն թարգմանութիւնը գրաբար կատարեցինք համաբելով որ աւելի հաճելի կ'անցնի շատերուն.

Digitized by A.R.A.R.@

ինչպէս նաև պատշաճ էր Ս. Գրոց գրաբարին ոճով նման լեզու մը գործածել, քան թէ ասոր հետ Ս. Գրոց վկայութիւններն ալ աշխարհաբարի վերածել. մանաւանդ թէ դիտեցինք որ գրաբարին մէջ աւելի դիւրաւ դուրս կը ցայտէին նմանութիւնները։

Հուսկ հարկ է ըսենք որ եգիպտական իմաստութեան համարներու բաժանումը գոյութիւն չունի բնագրին մէջ. պարզապէս կոչումներն և դէմընդդէմ բաղդատութիւնները դիւրութեամբ կատարելու համար է այդ ձևին վերածումը։

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՄԵՆ-ԵՄ-ՈՓԷԻ

(Ցատաչարան)

1. Ակիզբն վարդապետութեան կենաց, վկայութիւնք փրկութեան,
2. Ամենայն պատուիրանք խորհրդականաց[1] կանոնք այնոցիկ որ յարքունիս են,
3. Զի կարասցէ մարդ տալ պատասխանի այնմիկ որ խօսին ընդ նմա, և զհրեշտակ առ առաքիչն անդրէն առաքել,
4. Առաջնորդել զնա ի չաւիղս կենաց, և փրկել զնա ի վերայ երկրի,
5. Իջուցանել զսիրտ նորա ի տաճար իւր[2] և խոտորել զնաւ նորա ի չարէ,
6. Ջերծուցանել զնա ի բերանոյ ժողովրդոց յորժամ գովի ի շրթունս մարդկան։

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

ԻԲ. 21. Հաւասիկ ուսուցանեմ քեզ զբանս ճշմարիտս և զգիտութիւն. հնազանդ լիցիս պատասխանի տալոյ զբանս ճշմարտութեան որոց մատչիցին առ քեզ։ (Ըստ Եօթանասնից և կամ ըստ Ասոր. և Vulg. Զի տացես պատասխանի բան ճշմարիտ այնմիկ որ առաքեացն զքեզ)։

ԳԼ. Ա.

1. Մատո՛ զունկն քո, լուր բանից իմոց, հաստատեա զսիրտ քո գիտել զնոսա.
2. Բարի է թէ արկցես զնոսա ի սրտի քում, վա՛յ այնմիկ որ անցանէ զնոքաւ։
3. Հանգո՛ զնոսա ի տապանի սրտի քո եղիցին... ի սրտի քում։
4. Ցորժամ հասցէ մրրիկ բանից... եղիցին ի շրթունս քո։
5. Եթէ կեցցես և խորհեսցիս ի սոսա գտցես զայն յելս փրկութեան.
6. Գտցես զբանս իմ իբրեւ զգանձ կենաց և դու փրկեալ եղիցես ի վերայ երկրի։

ԻԲ. 17. Բանից իմաստնոց մատո՛ զունկն քո, և լսո՛ բանից իմոց. և հաստատեա զսիրտ քո զի գիտասցես զնոսա՝ թէ բարի են. և թէ արկցես զնոսա ի սրտի քում. և զուարճասցի միանգամայն ի շրթունս քո։

Գ. 23. Ամենայն պահպանութեամբ պահեա զսիրտ քո, զի ի սոցանէ են ելք կենաց։

Գ. 20. Պահեա՛ զնոսա ի սրտի քում, քանզի կեանք են որոց գտանեն զնա.

Թ. 11. 19. Զի բազում ժամանակս կեցցես և յաւելցին քեզ ամք կենաց։

ԳԼ. Բ.

1. Զգոյշ լեր չանարգել զաղքատն և մի՛ բուռն լինիցիս տնանկի.
2. Մի՛ ձգեր զձեռն հարկանել զձերն և մի՛... բերան առ երէցն.
3. Ցորժամ առաքեսցեն զքեզ ի հրեշտակութիւն մեծ, ...

ԻԲ. 22. Մի՛ բուռն լինիցիս տնանկի, քանզի աղքատ է, և մի՛ անարգիցես զտնանկն ի դրունս քո.

---

1. Հարցականները տարակայսներն են որ նշանակած են բնագիրն առաջին անգամ թարգմանողները։
2. Իմասաը մուք է։

digitised by A.R.A.R.@

4. Մի՞ զոչեսցես որում նախատեացն զքեզ, քեզէն տալով նմա պատասխանի. . .
. . . . . [1].
11. Զի այս է բարի սրտին Աստուծոյ՝ յամել մինչչեւ խօսեալ իցես։

ԻԶ. 4. Մի՛ տար պատասխանի անզգամի ըստ նորա անզգամութեան, զի մի՛ լինիցիս նմանող նմա։

ԳԼ. Գ.

1. Մի կագեր ընդ առն բարկացողի և մի բանակոխ լինիցիս ընդ նմա.
2. Խոտորեաց ի հակառակորդէ և խոնարհեցո զզլուխ քո որում նախատէն զքեզ։
3. Հանգիր մինչչեւ խօսեալ իցես, մրրիկ իբրեւ զբոց յեղէգն ընթանայ[3].
4. Այր «Բարկացող» ի ժամու իւրում, խոտորեաց ի նմանէ?
5. Թոյլ տուր դադարել նմա ինքեան, Աստուած տայցէ նմա պատասխանի։
6. Եթէ կեցցես և խորհեսցիս ի սոսա, որդիք քո տեսցեն զնոսա (զպտուղս)։

ԻԲ. 24. Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի և ընդ բարեկամի զայրացողի մի՛ բնակեր.

ԺԸ. 13. Որ տայ պատասխանի բան մինչչեւ լուեալ իցէ ինչ՝ անզգամութիւն է նմա...

ԳԼ. Դ.

1. Այր «Բարկացող» ի տաճարի՝ իբրեւ զծառ տնկեալ յանտառի,
2. Զոստս[3] իւր արձակէ ի խոնարհ (յանդունդս) և ի նաւահանգստի ունի զվախճան իւր.
3. Ի բաց բարձցեն զնա ի տեղւոջէ իւրմէ, հուր գերեզման նորա։
4. Իսկ «լուսաւոր» ճշմարիտ որ նստի մինչեւ ցեալ, իբրեւ զծառ տնկեալ ի պարտիզի.
5. Ծաղկէ նա և բազմացուցանէ զպտուղս իւր, նա առաջի Տեառն իւրոյ կայ։
6. Պտուղ նորա քաղցր, հովանի նորա ցանկալի, և զվախճան իւր ունի ի պարտիզի։

(Երեմ. ԺԷ. 5–8. Այսպէս ասէ Տէր. անիծեալ լիցի մարդ որ արասցէ զյոյս իւր ի մարդ, և ապաստան լիցի ի մարմին բազկի նորա, և ապստամբիցէ ի Տեառնէ սիրտ նորա։ Եւ եղիցի իբրև զմիշավայրի յանապատի և մի՛ տեսցէ յորժամ գայցէ բարութիւն... Եւ օրհնեալ լիցի մարդն որ յուսացաւ ի Տէր, և եղիցի Տէր յոյս նորա, և եղիցի իբրեւ զծառ զուարճացեալ ի գնացս ջուրց. և ընդ գնացս ջուրց ձգտեցուսցէ զարմատս իւր, և մի՛ երկիցէ յորժամ հասանիցէ տօթ. և եղիցի տեղն նորա անտառացեալ չուրջ զնովաւ. յամէ երաշտութեան մի՛ երկիցէ, և մի՛ կասեսցէ տալ զպտուղ)։

Գ. 9. Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց, և հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց։

ԳԼ. Ե.

1. Մի՛ զողասցիս ի նուիրաց տաճարին և մի՛ ազահեսցէ անկ քո ի լիութեան.
2. Մի՛ տարցիս զծառայ Աստուծոյ զի զործեսցէ նա վասն այլոց։
3. Մի՛ ասեր. Այսօր իբրեւ զվաղիւն. և այդ այդպէս իցէ.
4. Վաղիւն գայ, և այսօր անցանէ, և (գուցէ) ողողումն դարձցի ի ցամաք.
5. Երեւեսցին կոկորդիլոսք, ձիրագետիք ի ցամաքի, մեռցին ձկունք, գայլք յագեսցին, սագք ցնծասցեն։

Իէ. 1. Մի՛ պարծիր առ վաղիւն, զի ոչ գիտես զինչ ծնանիցի քեզ վաղիւն։

1. ԶԲարգմանուած տեղերուն մէջ խօսքը չար մարդուն վախճանին վրայ է, և կ'երևի թէ ան ալ առաքիչուքեան մը զրկուած է։

2. Տ՛ուն Նոյն բացատրութիւնը Իմաստ. Սղոմոնի Գ. 7։

3. Հաւանօրէն արմատ ըլլալու է, մանաւանդ որ «Բարձակեալ ի խոնարհ»ը կայ, ինչպէս Երեմիայի քով ալ։

digitised by A.R.A.R.@

6. Եւ ամենայն «լուալուոն» ի տաճարի ասէ. Մեծ է օրհնութիւն Հռայի[1]:	
7. Եթէ շատ լռեսցես, գտցես զկեանս, և փրկեալ եղիցիս ի վերայ երկրի:	ԺԸ. 21. Մահ և կեանք ի ձեռս լեզուի:

Գլ. Զ.

1. Մի՛ բառնար զսահմանս ագարակաց և մի նենգեր ի չափս չուանի.	ԻԲ. 28. Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենականս զոր եդին հարք քո:
2. Մի ցանկանայցես կանգնոյ միոյ ագարակի, և մի՛ յափշտակեսցես զսահմանս այլւոյ.	ԻԳ. 10. Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենականս և ի ստացուածս որբոց մի՛ մտանիցես:
. . . .	ԺԵ. 25.... Տէր հաստատէ զսահմանս որբոց և այրեաց:
9. Արդ մի՛ յափշտակեր զսահմանս ագարակաց և կալցի զքեզ երկիւղ և ոչ մի.	
10. Հաշտի Աստուած ի զօրութիւն լուսնի որ բաժանէ զսահմանս ագարակաց:	
11. Եթէ ցանկաս փրկութեան անձին քո երկի՛ր ի Տեառնէ ամենեցուն:	Թ. 10. Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն: ԺԹ. 25. Երկիւղ Տեառն ի կենդանութիւն առն:
12. Մի՛ անցցես ընդ ակօս այլոց, լաւ է քեզ արգոյ լինել ի սահմանս նոցա.	
13. Գործեա՛ զագարակ քո, գտցես զկեանս քո և ընկալցիս զցորեան կալոյ քոյ:	ԺԲ. 11. Որ գործէ զերկիր իւր՝ յագեսցի հացիւ: ԻԸ. 19. Որ գործէ զերկիր իւր՝ լցցի հացիւ:
14. Լաւ է սակաւ ինչ զոր տայ քեզ Տէր, քան զհազարս անիրաւութեամբ:	ԺԵ. 16. Լաւ է փոքր բաժին երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս աներկիւղածութեամբ:
15. Ոչ բնակին զտիւ ի տաղաւարի, ոչ մատուցանեն զկերակուր յամանի,	ԺԶ. 8. Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս ամպարշտութեամբ.
16. Սուղ է ժամ բնակութեան նոցա ի շտեմարանի ընդ լուսանալն՝ և պակասեն:	
17. Լաւ է աղքատութիւն ի ձեռին Աստուծոյ քան զմեծութիւնս ի շտեմարանս,	ԺԵ. 29. Լաւ է սակաւիկ ինչ առնուլ արդարութեամբ, քան զբազում արդիւնս աներկիւղածութեամբ:
18. Լաւ է հաց, յորժամ բերկրիցի սիրտ, քան զմեծութիւնս ցաւովք հանդերձ:	ԺԷ. 1. Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտունս լի զենլեօք և բարեօք՝ թշնամութեամբ:

Գլ. Է.

1. Մի՛ ձգեր զսիրտ քո ի խնդրել զմեծութիւն, չի՛ք որ ոչ ծանիցէ զՇայ և զՌենենդ[2].	
2. Մի՛ ձգեր զսիրտ քո արտաքս. ամենեցուն ժամանակ է:	
3. Մի՛ ձգտիր խնդրել զմեծութիւն յորժամ բաւականք են քեզ բարութիւնք քո:	ԻԳ. 4-5. Մի՛ ձգտիր՝ եթէ տնանկ իցես, ընդ մեծատան, այլ քո իմաստութեամբդ մերժեաց ի նմանէ: Եթէ հաստատեսցես զակն քո ի վերայ նորա, ոչ ուրեք երեւի, զի հանդերձեալ է նորա իւր թեւս որպէս զարծուոյ, և դառնայ ի տուն նահապետի իւրոյ:
4. Եթէ մեծութիւնք եղեն քեզ ի գողոնից, ոչ կացցեն առ քեզ գիշերի[3].	
5. Ի ծագել այգուն ոչ եւս են ի տան քում. երեւեսցի տեղի նոցա, այլ նոքա չիցեն անդ.	
6. Եբաց երկիր զբերան իւր և եկուլ զնոսա, ընկղմեցան ի դժոխս.	

1. Ra (Արեգակը զոր կը պաշտէին):
2. Shai և Renent էին հարստութեան դիցուհիները:
3. Առաւօտ չեղած պիտի կորսնցնես գողութեամբ կամ անիրաւութեամբ ստացածներդ:

digitised by A.R.A.R.@

7. Այարին իւրեանց ծակ ըստ մեծութեան նոցա, թաղեցան ի չտեմարանի.
8. Այարին իւրեանց թեւս ի նմանութիւն հաւուց, թռուցեալ վերացան յերկինս։
9. Մի խնդար ընդ մեծութիւնս ի գողոնից, և մի տրտմեսցիս ընդ աղքատութիւն քո։

. . . . . .

11. Նաև արծաթասիրի զկայ առնու ի տղմի, նաւակ «լռակեցի» աշողակ հողմովք վարի.
12. Եւ Աստն ուղղեա զաղօթս քո ի ծագել նորա, ասա. Տուր ինձ առողջութիւն և զօրութիւն։
13. Տացէ քեզ զոր պիտոյն է ի կեանս քո և զերծցիս յահէ անտի։

ԺԳ. 11. Մեծութիւն խակեալ անիրաւութեամբ՝ պակասեսցէ. իսկ որ աստուածապաշտութեամբ ժողովէ՝ բազմացցի։

ԺԳ. 18. Աղքատութիւն և զանարգանս ի բաց քառնայ խրատ։

Ը. 17. Որ զիսն խնդրեն՝ գտցեն չնորհս.

ԳԼ. Ը.

1. Լուր առնել զբարի ի մարդիկ և ամենեքին ողջոյն տացեն քեզ։
2. Որպէս Ուրեայ[1] «կեցցէ» գոչեն, և Ապոպեայ[2] ընդ երեսս թքանեն։
3. Փրկեա զլեզու քո յանիրաւ խօսից, սիրելի լիցիս մարդկան։
4. Ի ներքին կողմն տաճարին գտցես քեզ տեղի. խորտիկք քո ի հացէ Տեառն քո.
5. «Երանեալ» և ամիտփեսցես զանձն ի տապան. առաջի զօրութեան Աստուծոյ փրկեալ եղիցես.
6. Մի գոչեր առ մարդ՝ «անօրէն», թաքո զնա. նապարհ ընդ որ փախիցէ։
7. Եթէ չար ինչ կամ բարի լուար, և զառնելիս նոցա մի պատմեր ժողովրդեան։
8. Լեզու քո լիցի պատգամ աւետեաց, այլ զչար ծանկեա ի սրտի քում։

ԺԸ. 17. Արդար՝ անձին իւրում չարախօսէ։

(ԺԱ. 30. Սիր. Ցառաջ քան զվախճան մի տար երանի մարդոյ)։

(ԺԹ. 20. Սիրաք. Լուար ինչ բան, մեռցի անդրէն ի սրտի քում. պինդ կաց որ ոչ հերձու և ելանէ արտաքս)։

ԳԼ. Թ.

1. Մի լինիր ընկեր առն բարկացողի և մի մերձեսցիս ի նա խօսել ընդ նմա.
2. Պինդ կալ զլեզու քո չտալ պատասխանի առաջնորդին. զգոյշ լեր չանիծանել զնա։
3. Ցորժամ ասիցէ բան ի զայրացուցանել ըզքեզ եւ պատասխանեաւ քով զերծուսցես զանձն քո.
4. Չպատասխանի քո կշռեա ընդ ընկերի քում և զգոյշ լեր զի մի նմա...
5. Որ խօսիցի չար ինչ սրտիւ, քան զհողմս հրապազէ.

Իբ. 24. Մի լինիր ընկեր առն բարկացողի և ընդ բարեկամի զայրացողի մի բնակեր։

ԺԵ. 1. Պատասխանի ողջ դարձուցանէ զսրբտմութիւն. բան խիստ յարուցանէ ըզբարկութիւն։

---

1. Uraeus է թունաւոր օձ մը (քարը) որ աստուածներու և թագաւորներու ճակին վրայ կը անկուի։

2. Apopi առասպելական մեծ վիշապն է, թշնամի աստուածներուն և մարդոց։

digitised by A.R.A.R.@

6. Ինքն աւերէ և չինէ լեզուաւ իւրով, բանս ինասակարս բարբառի.
7. Տայ պատասխանի գանից արժանի, որոյ բեռն կործանումն է։
8. Կազմէ նաւակ անցուցանել յային զամենասին, բան անօրէնութեան դնէ (ի նաւի).
9. Անդէ զանձն նաւավար որոգայթիւ բանից, երթայ և դառնայ անդրէն չաղփադփելով.
10. Եթէ կերիցէ և արբցէ ի տան, պատասխանի նորա արտաքս է.
11. Ցաւուր դատաստանի մեղաց նոցա վա՛յ իցէ որդւոց նոցա։

. . . . . .

16. Բազցր են չրթունք նորա, չար է լեզու նորա հուր բորբոքեալ ի փորի նորա։
17. Մի՛ ընթանար առ մոլին? այն, և ոչ կալցի զքեզ երկիւղ.

Գլ. Ժ.

1. Մի՛ տար ողջոյն «բարկացողի» զի մի՛ քեզէն ապականեսցես զսիրտ քո.
2. Մի՛ ասիցես նմա ստութեամբ «Ողջ եր», յորժամ երկիւղ ունի զսիրտ քո։
3. Մի՛ խօսիր ընդ առն կեղծաւորութեամբ զի պիղծ է այն առաջի Աստուծոյ.
4. Մի՛ ի բաց առներ զսիրտ քո ի լեզուէ քումմէ, ցանկալի են խորհուրդք քո.
5. Մեծարոյ եղիցիս առաջի ժողովրդեան և փրկեալ ի ձեռին Աստուծոյ.
6. Ատեայ Աստուած զայն որ ապականէ զբանս, հակառակութիւն նորա մեծ է, նա է որ...

Գլ. ԺԱ.

1. Մի՛ ցանկար բարեաց առն խոնարհի և մի՛ փափագեր հացի նորա,
2. Զի բարիք առն խոնարհի իբրև զմրրիկ ի կոկորդի և դառն են ի քիմս։
3. Եթէ ստերդմութեամբ ստացաւ զայնոսիկ, սիրտ նորա յինքենէ ելցէ արտաքս?

. . . . . .

5. Մեղապարտ զոցիս յանդիման առաջնորդի և կշտամբեալ ի բանս քո.
6. Օրհնութիւնք քո՝ յանէծս դարձցին և խոնարհութիւն քո ի քանս։
7. Ո՞վ որ յագեալդ ես հացիւ զոր ուտես՝ փոխես և այսպէս զրկես զանձն քո ի բարեաց քոց։
8. Հայեաց ի վերակացուն (անօրէն՝) առն խոնարհի, որպէս հարուածք գաւազանի տանջեն զնա.

ԺԸ. 21. Մահ և կեանք ի ձեռս լեզուի, և որ յաղթէ նմա՝ կերիցէ զպտուղ նորա։

ԺԴ. 35. Բարկութիւն կորուսանէ զիմաստունս։

ԺԴ. 17. Բարկասիրտ՝ զործէ առանց խորհրդոյ...

ԺԸ. 14. Զցասումն առն հանդարտեցուցանէ ծառայ իմաստուն, այլ առն նեղասրտի ոչ ժոյժ ունիցի։

ԺԴ. 17. Բարկասիրտ զործէ առանց խորհրդոյ, և այր իմաստուն յոյժ համբերէ։

ԺԶ. 27. Այր անզգամ փորէ անձին իւրում չարիս, և ի վերայ չրթանց իւրոց զանձէ հուր։

ԻԶ. 4. Մի՛ տար պատասխանի առն անզգամի ըստ նորա անզգամութեան, զի մի՛ լինիցիս նմանող նմա։

ԺԲ. 22. Պիղծ են առաջի Տեառն չրթունք սուտք, իսկ որ առնէ զհաւատս՝ ընդունելի է նմա։

Գլ. ԺԱ.

1. Մի՛ ցանկար բարեաց առն խոնարհի և մի՛ փափագեր հացի նորա,
2. Զի բարիք առն խոնարհի իբրև զմրրիկ ի կոկորդի և դառն են ի քիմս։
3. Եթէ ստերդմութեամբ ստացաւ զայնոսիկ, սիրտ նորա յինքենէ ելցէ արտաքս?

. . . . . .

5. Մեղապարտ զոցիս յանդիման առաջնորդի և կշտամբեալ ի բանս քո.
6. Օրհնութիւնք քո՝ յանէծս դարձցին և խոնարհութիւն քո ի քանս։
7. Ո՞վ որ յագեալդ ես հացիւ զոր ուտես՝ փոխես և այսպէս զրկես զանձն քո ի բարեաց քոց։
8. Հայեաց ի վերակացուն (անօրէն՝) առն խոնարհի, որպէս հարուածք գաւազանի տանջեն զնա.

ԻԳ. 6. Մի՛ ուտեր հաց ընդ առն չարական և մի՛ ցանկանար կերակրոյ նորա։
7. Զոր օրինակ թէ մտաց ոք կլանէ, այնպէս ուտէ և ըմպէ։ (և կամ)

ԻԶ. 25. Եթէ ապաչիցէ զքեզ թշնամին, և ի ձայն բարձր աղերսիցէ, մի՛ հաւատար նմա. զի եօթն չարիք կան ի սրտի նորա

ԻԳ. 8. Մի՛ մուծանիցես զնա առ քեզ, և մի՛ ուտիցես զհաց ընդ նմա, զի նոզկացուցանէ զնա և ապականէ զբանս քո բարիս։

digitised by A.R.A.R.@

9. Ամենայն այք նորա ի կապանս տանջին և նա . . . . ի բանտի։
10. Թէպէտ արդարասցիս առ առաջնորդին քում, չարագործ թուիցիս յաչս կրտսերաց։
11. Այդ դարձո՛ զնաւ քո ի խոնարհէ զոր տեսանես ի ճանապարհի և մի՛ դարձցիս հայել յինչս նորա։

ԳԼ. ԺԲ.

1. Մի՛ ցանկանայցես ընչից մեծամեծաց յորժամ կարես ուտել զհաց քո միայն։
2. Եթէ կացոյց զքեզ ի վերայ ընչից իւրոց, արհամարհեա՛ զոր նորա իցէ, վայելեաց ի քոյսդ։
3. Մի՛ ինչ բարձցես ընդ առն «բարկացողի» և մի՛ լինիր ընկեր թշնամւոյ (մեծամեծաց).

. . . . . .

ԳԼ. ԺԳ.

1. Մի՛ գրեր ստութեամբ զայր... ի մատենի (հարկաց) (զի) պիղծ է առաջի Աստուծոյ։
2. Մի՛ տար վկայութիւն բանիւ անօրէնութեան, ի բաց մերժելով զայլս լեզուաւ քով։
3. Մի՛ կոչեսցես ի դատ զայր չքաւոր, և մի՛ (զգիրս) քո նենգեսցես։
4. Եթէ բազում ինչ գոցես առ առն աղքատի? արա զայն երիս մասունս.
5. Թող զերկուս, կալ քեզ զմինն, և զայդ գոցես քեզ չաւիղ կենաց։
6. Եթէ գիշերի հանգուցեալ փոյթ գոցիս իբրև զարշալոյս?, գոցես զնա քեզ հրեշտակ բարի.
7. Լաւ է օրհնութիւն իբրև սիրելւոյ մարդկան քան զմեծութիւնս ի շտեմարանի։
8. Լաւ է հաց յորժամ բերկրիցի սիրտ, քան զմեծութիւնս ի ցաւս [1]։

ԳԼ. ԺԵ.

1. Արա զբարի և հասու լիցիս ինձ, (մի՛ անօրինիր ի տախտակս?)
2. Մատն դպրի կտուց է Իբսեայ, զգոյշ լեր չշարժել զնա.
3. Զի նստի քահանայ ի Հերմոպոլիս, բայց ակն նորա թափ ընդ երկիր անցանէ.
4. Եթէ տեսցէ զոք անօրինել մատամբ՝ զխորտիկս նորա յափշտակէ.
5. Եւ դպիր որ մատամբ անօրինէ, ոչ գրեսցի նմա յորդի (որպէս դպիր).
6. Եթէ կեցցես և խորհեսցիս ի սոսին, և որդիք քո տեսցեն զայնոսիկ (առցեն)։

Իդ. 28. Մի՛ լինիր վկայ սուտ ընկերի քում, և մի՛ լայնիր շրթամբք քովք։
(կամ ԺԹ. 5. Վկայ սուտ առանց պատժի ոչ լիցի. և որ մեզ դնէ տարապարտուց՝ ոչ ապրեսցի)։
(և կամ ԺԹ. 9. Վկայ սուտ առանց պատժի ոչ լիցի և որ բորբոքէ զչարութիւն ընկերաց, և որ յուզէ զչարութիւն՝ կորիցէ)։

Ժե. 29. Լաւ է սակաւիկ ինչ առնուլ արդարութեամբ, քան զբազում ալդիւնս աներկիւղածութեամբ։

Ժէ. 1. Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտունս լի զենլեօք և բարեաք՝ թշնամութեամբ։

Իդ. 11. Փրկեա՛ զորս ի մահ տանին և գնեա՛ զմահապարտս և մի՛ խնայեր։
Ապա թէ ասիցես, թէ ոչ ճանաչեմ զնա՝ և ոչ նա զիս ճանաչէ, գիտասչիր՝ զի Տէր զսիրտս ամենեցուն ճանաչէ. և որ ստեղծ զչունչ ամենեցուն՝ նա գիտէ զամենայն և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։

---

1. Այս 7–8 համարները կրկնութիւն են. (տե՛ս Գլ. Զ. 17–18 համարները).

digitised by A.R.A.R.@

ԳԼ. ԺԶ.

1. Մի՛ ճնշեր զսլաք? նենգելով զկշիռս, և նուա֊ զեցուցանելով զաստիճանս չափուց.

2. Մի՛ ցանկար ագարակացն չափուց[1] զորս ի բաց մերժել հրամայեն օրէնք։

Ի. 10. Կշիռ մեծ և փոքր, և չափ կրկին պիղծ են առաջի Աստուծոյ երկոքեան։

3. Նստի քաջահաւ յանդիման կշռոց և զհոգի յուղղութիւն ձգէ։

ԺԶ. 14. Մէտ կշռոց է արդարութիւն ի Տեառնէ, և գործի նորա կշիռք արդարք։

4. Ո՞վ իցէ աստուած իբրեւ զմեծն Թոտ[2] որ եգիտ զհանճար գործելոյ զայսպիսի (կշիռս և չափս)։

5. Մի՛ առնիցես քեզ կշիռս մանունս, բազում ինչ է... ի զօրութեան Աստուծոյ։

Ի. 23. Պիղծ է առաջի Տեառն չափ կրկին, և կշիռ նենգութեան ոչ է բարւոք առաջի նորա։

6. Եթէ տեսցես զայր անօրինել? (յայնոսիկ), ի բաց լեր ի նմանէ։

ԺԳ. 16. Իմաստունն զարհուրեալ խոտորեցաւ ի չարէ, իսկ անզգամն յանձնապաստան խառնակի ընդ անօրինին։

7. Մի՛ ուժգլին ցանկար պղնձի անօթոյ. անար֊ գեա զազնիւ կտաւիս։

8. Զի՞նչ օգտիցեն շուճ և մեք[3] եթէ գողունի իցեն առաջի Աստուծոյ։

9. Եթէ ոք պատրեսցէ զայր ի պղինձ՝ փոխա֊ նակ ոսկւոյ, ի ծագել առաւօտու (ոսկին) կապար է[4]։

ԳԼ. ԺԸ.

1. Մի՛ երկիւղիւ ննջեսցես գիշերի վասն վաղ֊ ուի, (Թէ) ի ծագել լուսոյ ո՞րպիսի առա֊ ւօտն իցէ. մարդ անգէտ է վաղուի։

ԻԷ. 1. Մի՛ պարծիր առ վաղիւն, զի ոչ գիտես զի՞նչ ծնանիցի քեզ վաղիւն։

2. Աստուած ի բարձրութեան իւրում է, և մարդ ի խոնարհութեան իւրում.

3. Ա՛յլ ինչ է որ պատմի, և այլ զոր գործէ Աս֊ տուած։

4. Մի՛ ասիցես թէ զի՞նչ մեղք իցեն, վաղվա֊ ղեալ մտանել ի դատաստան (ընդ Աստուծոյ).

(Սիրաք Ե. 4. Մի՛ ասիցես, մեղայ՝ և զի՞նչ եղև ինձ։ Զի Տէր երկայնամիտ է վասն դարձի քո և քաւութեան)։

5. Զի մեղք յԱստուած հային. նա մատամբ իւրով կնքէ զայնոսիկ[5]։

6. Ոչ գոյ բարձրութիւն ի ձեռս (յաչս?) Աս֊ տուծոյ, որպէս չիք խոնարհութիւն առաջի նորա։

(Յոբ. Դ. 17-20 . . . . . եհար զնոսա ըստ օրինակի ցեցոյ, և յառաւօտէ մին֊ չև յերեկոյ ոչ ևս իցեն)։

7. Որ ջանահնար լինի խնդրել զբարձրութիւն, արդէն եհաս ժամ կործանման նորա?.

8. Զգեա՛ զսիրտ քո, քաջալերեա՛ զանձն քո, մի ուղղեսցես զնաւ լեզուաւ քով.

9. Լեզու մարդոյ ղեակ է նաւու, և Տէրն ամե֊ նեցուն վարիչ նորա։

1. Դպչաևրու մէջ գործածուած չափերուն՝ փոխանակ օրինական չափերուն։

2. Thot.

3. Կաւակղէնի տեսակներ են,

4. Տե՛ս վերն ալ Գլ. Զ. 16, և Գլ. Է. 5. նոյն գա֊ ղափարները, թէ ինչպէս Աստուած անկրաւութիւնը կը խայտառակէ և կը պատժէ,

5. Աստուած կը տեսնէ և կը կնքէ մեղքը որպէս զի պատժէ գործողը ըստ արդարութեան,

digitised by A.R.A.R.@

Գլ. ԻԱ.

1. Մի՛ ասիցես. Գտի առաջնորդ զօրաւոր, հա-
բից զայր ի քաղաքի քում.
2. Մի՛ ասիցես. Գտի. . . . հարից զայր
անգէտ (միամիտ).
3. Քանզի ոչ գիտես զխորհուրդս Աստուծոյ, և
զվաղիւն ոչ տեսանես։
4. Հանգիր ի ձեռս Աստուծոյ, լռութիւն քո
խոնարհ արասցէ զնոսա.
5. Կոկորդիլոս որ . . . . տկար է զօ-
րութիւն նորա?
6. Մի՛ յայտներ ամենեցուն զծածուկս սրտի
քո, ապա թէ ոչ ապականես զվայելչութիւն
անձին քո.
7. Մի՛ ընդ բերան ամենեցուն շրջեսցին քո
բանք և մի՛ լինիր ընկեր առն բարկացողի։
8. Լաւ է մարդոյ թաքուցանել զբան ի սրտի
քան արտաքս հանել ի կորուստ անձին.
9. Մի՛ ջանահնար լինիր հասանել ի բարձրու-
թիւն, և մի՛ առնիցես ինչ կորուսանել զնա?

Ի. 22. Մի՛ ասիցես թէ առից վրէժ ի թշնամ-
ւոյն

(Ի. 22.)… այլ համբեր Տեառն, զի քեզ օգ-
նական լիցի։

ԺԳ. 3. Որ խնայէ ի բերան իւր՝ պահէ զանձն,
իսկ որ յանդուգն է շրթամբք՝ խռովէ
զանձն իւր։

ԺԷ. 9. Որ ծածկէ զյանցանս՝ խնդրէ զբարե-
կամութիւն, իսկ որ ատեայ զծածկելն՝
քակէ զբարեկամս և զընտանիս։

Գլ. ԻԳ.

1. Մի՛ ուտիցես հաց առաջի իշխանին, լայնե-
լով զբերան քո յանդիման նորա
2. Զի թէ յագեսցիս պատառովք անօրէնութեան,
քաղցրասցին քեզ ի թքի քում?.
3. Տես զսկաւառակն որ հանդէպ երեսաց քոց,
և լցէ՛ նովաւ զկարօտութիւն քո.
4. Ըստ աւագութեան մեծին ի պաշտաման
իւրում և բազմութիւն ջրհորոց նորա։

ԻԳ. 1. Յորժամ նստիցիս յընթրիս ուտել ի սե-
ղան հզօրաց, իմանալով իմասջիր որ
ինչ առաջի դնիցի, և ապա մխեսջիր
զձեռն քո։

Գլ. ԻԵ.

1. Մի՛ կատակեր զկուրիւ, և մի՛ ծաղր առներ
զթզուկ և մի՛ մեղանչեր առն հաշմի.
2. Մի՛ ծաղր առներ զայր որ ի ձեռս Աստու-
ծոյ, և մի՛ զայրասցիս ի նա յորժամ պակասէ.
3. Զի մարդ կաւ է և խոտ (յարդն) և Աստուած
հաստիչ նորա[1].
4. Նա զօրհանապազ կործանէ և կանգնէ և
հազարաւորս առնէ զխոնարհս ըստ կամաց
իւրոց։
5. Նա ինքն կացուցանէ հազարս յիշխանս, որք
են ի ժամու կենաց իւրեանց?
6. Ցնծայ որ եհաս յԱմենտի[2], փրկեալ ի ձե-
ռին Աստուծոյ։

ԺԷ. 5. Որ կատակէ զաղքատով՝ բարկացուցանէ
զարարիչ իւր։
Եւ որ ոտն հարկանէ կորուսելոյն՝ ոչ
արդարասցի։

(Յոբ. Դ. 9. իսկ արդ զբնակեալս ի տունս կաւեղէնս,
յորոց ինքեանք ի նմին կաւոյ եմք)։

(Ա. Թագ. Բ. 6–8. Տէր մեռուցանէ և կեցուցա-
նէ, իջուցանէ ի դժոխս և հանէ։ Տէր
աղքատացուցանէ և մեծացուցանէ, խո-
նարհեցուցանէ և բարձրացուցանէ.
կանգնէ յերկրէ զտնանկն… նստուցա-
նել զնոսա ընդ զօրաւորս ժողովըր-
դեան)։

---

1. Անհարկութիւն եգիպտական չինուածակերպին.
2. Amenti այսինքն մեր Եդեմ, գրական բառը, ինչ որ Յոյներն և Հռովմայեցիք ալ Եղիսեան դաշտեր կը կոչէին.

digitised by A.R.A.R.@

ԳԼ. ԻԶ.

1. *Մի՛ նստիր ի տան ցքւոյ, և մի՛ լինիր ընկեր այնմիկ որ մեծ է քան զքեզ.*
2. *Թէպէտ կրտսեր ամօք, այլ գործք նորա մեծք, թէպէտ բազմամեայ քան զքեզ։*
3. *Արա՛ քեզ բարեկամ զայր հաւասար քեզ, ի հեռաստանէ վայելեա՛ յարեւ*[1]*։*
4. *Եթէ տեսցես ի հրապարակս այր մեծ քան զքեզ, տուր նմա տեղի մեծարանօք?*
5. *Ջեռն տուր ծերոյ որ արբեալն է ցքւով, և յորդիս նորա մեծարեսցես զնա։*
6. *Ոչ տկարանայ բազուկն թէ մերկասցի և ոչ բեկանի ողն կորացեալ,*
7. *Ոչ աղքատանայ այր ի խօսել որ հաճոյն է, քան զմեծատուն որոյ դատն իցեն խօսք։*
8. *Վարիչ որ ի հեռաստանէ դիտէ, չտայ թոյլ ընկղմել նաւակին։*

Ժէ. 17. *Յամենայն ժամ բարեկամք եղիցին քո։*

ԳԼ. Լ.

1. *Հայեա՛ց յայս երեսուն գլուխս, զուարճացուցանեն, խելամուտ առնեն, առաջնորդ են ամենա՛յն զրոց.*
2. *Յան իմաստութիւն տգիտի, եթէ ընթերցցիս զնոսա առաջի նորա, և նա տացէ զանձն ի նոսա?*
3. *Լի՛ց զանձն քո նոքօք, դի՛ր զնոսա ի սրտի քում, լիցիս այր որ ի միտ առնու զնոսա, որ իմաստուն լիցի յորժամ ուսուցանէ.*
4. *Զդպիր ճարտար ի գործ իւր ածեալ կացուսցեն առաջի թագաւորաց։*

ԻԲ. 20. *Եւ դու գրեա՛ զնոսա յանձին քում երեքկին, ի խորհուրդս, ի գիտութիւն և ի հանճար*[2]*։*

Գ. 1. *Որդեակ, զօրէնս իմ մի՛ մոռանար, արկ զնոսա ընդ պարանոց քո, և գրեա՛ զնոսա յընդարձակութիւն սրտի քո և գտցես շնորհս։*

ԻԲ. 29. *Զայր շոյտ և զգոյշ ի գործ իւր՝ թագաւորաց առաջի պարտ է կացուցանել։*

Հոս կ'աւարտի Ամեն–եմ–ոփէի բարոյագիտական խրատները. Թանկագին հաւաքածոն որ նոր լոյս և ուղղութիւն կը բերէ Ս. Գրոց բնագրի այնքան դժուարին և կարեւոր ուսումնասիրութեան. և դեռ այս նորագիւտ գործը լոկ նմոյշ մ'է այն համբաւեալ իմաստութեան որով վարժեցաւ Մովսէս. Ներկայս յոյս մը չի՛ տար հնգամատեանի շուրջ ալ նոր վաւերագիրներ ակնկալելու։

Հ. ԵՂԻԱ ՓԷՅԻԿԵԱՆ

---

1. *Քեզի հաւասար մարդոց հետ ընկեր կամ բարեկամ եղիր. իսկ անոնցմէ՝ որ քեզմէ վեր են՝ կրնաս օգտուիլ՝ բայց հեռուէն, ինչպէս որ հեռուէն կը վայելենք արեւը. (զի շատ մօտեցողը կ'այրի)։*

2. *Հաւանօրէն սրբագրելի է ըստ եգիպտականին, ինչպէս փորձած էինք մեր նախորդ յօդուածին մէջ. վասն զի գլուխներն ալ երեսուն են՝ եթէ չնկատենք վերջին երեք յաւելուածները։*

digitised by A.R.A.R.@